

ՀԱՇԱԿ ՈՍԿԵՂԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ
ՊԱՏՄԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԱՅԼՈՎԲՆ ՀԱՆԴԵՐՁ

ԸՆԴ ԽՆԱԾՈՎ

Ա. ՄԱՏԱԹԻՐԱՅ ԳԱՐԱԳԱՅԵԱՆ ԵՒ Յ. ԳՈՒՐԳԵՆԻ

ՏԱՐԻ Բ.

ԹԻԻ Բ. — 1 ՓԵՏՐՎԱՐ



Ի Կ. ՊՈԼԻՍ

ԱՌ ՏՈՎԱԾՓԱՅ ԳԱՎԱՅԵԱՆ

1887

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԸՏՄԱԿԱՆ

Պատմութիւն Հայ մատենագրութեան Ա. Մ. Գ.
Դիւտ եւ ազդեցութիւն արուեստի Տպագրութեան . Ա. Մ. Գ.

ԳԻՏՆԱԿԱՆ

Թե զիարդ համեմատին բարուր մարդակերպը ընդ
մարդոյ Յ. Գ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի Գրոց Տելեմարայ Գ. Ս.
Թօթափումն տերեւոց Յ. Գ.
Աղուես եւ Քօշ Ա. Մ. Գ.
Առանձինն բանք Հայերէն լեզուի (Բ.) Յ. Գ.

ՃԱՇԱԿ

ՄԱՍԻՔԱՆԻՆ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅ ՄԱՏՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՍԿԶՐԱՆԷ ԱՆՏԻ ՄԻՆՁԵՒ ՅԱՌԱՋԻՆ ԿԷՍ ԱՆԴԻ Ե. ԴԱՐՈՒ

« Երկնէր երկին և երկիր ,
Երկնէր և ծիրանի ծով .
Երկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն .
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր ,
Ընդ եղեգան փող բոց ելանէր ,
Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր .
Նա հուր հեր ունէր . ապա թէ բոց ունէր մօրուս ,
Եւ աչկունքն էին արեգակունք : »

Երկրորդն զկնի սորա է երգն Վարդգեսի .

« Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւա-
ռէն , զՔասաղ գՔտով ,
Եկեալ նստեալ զՇրէշ բլրով , զԱրտիմէդ քաղաքաւ , զՔա-
սաղ գետով ,
Կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի : »

Երրորդն՝ Անէծք Արտաշիսի առ որդին : « Ի մահուանն
Արտաշիսի , ասէ Խորենացին , բազում կոտորածք լինէին ըստ
օրինի հեթանոսաց . դժուարի ասեն Արտաւազդ ասելով
ցհայրն : »

« Մինչ դու գնացեր , և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար ,
Ես աւերակացս ո՞րպէս թագաւորեմ : »

Վասն որոյ անիծեալ զնա Արտաշիսի ասաց այսպէս .

« Դու յորս հեծցիս յազատ ի վեր ի Մասիս ,
Զքեզ կալցին քաջք , տարցին յազատ ի վեր ի Մասիս .
Անդ կացցես , և զլոյս մի տեսցես : »

Զորորորդ՝ « Հեծաւն » զառեւանկութենէ դստերն Ալանաց .

« Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ ,
եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն ,
եւ անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ գետն ,
եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝
Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց ,
եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին ,
Արագ հասուցանելով ի բանակն իւր : »

Հինգերորդ՝ մանր մանր հատուածք .

« Տենչայ Սաթինիկ տիկին տենչանս՝

Զարտախուր խաւարտ և զտից խաւարծի ի լարծիցն Ար-
գաւանայ : » —

« Այլ և Արտաւազդայ , քաջի որդւոյն Արտաշիսի ,
Ոչ գտեալ տեղի ապարանից ի հիմնանալն Արտաշատու ,
Նա անց գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ : » —

« Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ ,
եւ դեւ փոխանակ եղին : » —

« Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի ,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն : »

Վեցերորդ՝ երգն զՏրդատայ .

« Իբրեւ զսէգն Տրդատ որ սիգալով աւերեաց զթումբս գետոց ,
եւ ցամաքեցոյց ի սիգալ իւրում գյորձանս ծովուց : »

Եօթներորդ՝ երգն Նաւասարդի աւանդեալ մեզ ի Մա-
զիստրոսէ , իբրեւ արդարեւ մարգարիտ գտեալ յաղբեւս
անդ միջին դարու Հոյ դպրութեան .

« Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի և զառաւօտն նաւասարդի ,
Զվազելն եղանց և զվազելն եղջերուաց .

Մեք փող հարուաք , և թմբկի հարկանէաք : »

Զառաջնոյն յերգոց աստի , այն է զերկնէր երկնէն ա-
տելի է համառօտիւ : Յաճախ դարձուած ի կարգի բանիցն ,
որպիսի են՝ « Երկն ի ծովուն ունէր , » « ընդ եղեգան փող , »
դոյականքն հոգի իբրեւ վերադիր , « հուր հեր » , « բոց
մօրուս , » որպէս և նուազականքն , « կարմրիկ եղեգնիկ , »

« սլատանեկիկ , » « աշկունք , (աշիկ ,) են ըստ մեզ նշանք հնութեան և հարկանեն զհոտ ժողովրդական լեզուի , որպէս և յերգն Վարդգեսի կրկնութիւնքն « եկեալ նստեալ » , « կռել կոյիել , » ցուցանեն թէ լեզուն երթայր և մերձենայր ի յորդն և ի պերճ լեզու թարգմանչաց :

Յերրորդ հատուածին , այն է՝ յԱնէժսն Արտաշիսի , նըշմարի դարձեալ ժողովրդական լեզուի գոյն . « Մինչ դու գընացեր և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար , ես « երակաց » « Բաբե » լսեալս . որպէս և մեւս փոքր հատուածն , « վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ , և դեռ փրանայ երբն :

Այս նշմարանք ժողովրդական լեզուի երթայ յառաջ ի չորրորդ հատուածորին , որ է « Հեծաւն , » մինչեւ ի խոտորումն որպիսի է ուղղականահայցականն « զմէջք : » Տխուրս այս երեւոյթ չէ սակայն նշան անկման լեզուին , քանզի երգն Տրդատայ առ Ագաթանգեղոսի , « Իբրեւ զսէգն Տրդատ » և որ զինի , ցուցանէ զլեզուն անեղծ և անարատ յիւր ի դրական կերպարանս :

Յերգն նաւասարդի վաթելն և ծիան , որպէս և հարուշ լիւ և լիւսին հարկանել , ընծայեցուցանեն դարձեալ զդրոշմ անպաճոյճն և խեցբեկ լեզուի ժողովրդեան :

Այսոքիկ են աւասիկ յանգիր մատենագրութենէն Հայոց հնագոյն մնացորդք , յորս չէ մարթ չտեսանել զճիշդն և զանստգիւտ նմանութիւն բնակն Հայ լեզուի ժողովրդեան զոր նշմարեմք ի Բուզանդ , ուրեք ուրեք և յՆզնիկն :

Որ ինչ վասն ժամանակի երգոցս է , յորոց բազում ինչ կայ մեզ ուսանել զլեզուէն , չեմք ի կարծիս այնոցիկ որ ոչինչ ազդեցութիւն կամին չնորհել թարգմանչաց ի կազմութիւն և ի յօրինուած լեզուին՝ զամենայն ընծայելով ժամանակին , որպէս թէ զանխուլ իմն զօրութիւն ըստ բոլորեւ դարուց կազմեալ յարդարեաց զլեզուն յանգէտս իմն և յանգգաստս , միջնորդութեամբ ժողովրդեան , առանց իրիք սատարութեան արուեստի և հնարագիտութեան , զոր արկին ի կիր թարգմանիչք մեր առ քրիստոնէութեամբ այնպէս , որպէս նախնիքն նոցա առ հեթանոսութեամբ : Բայց և ոչ բանաւոր և պատ-

մական թուի մեզ զամենայն ընծայել ժամանակին քրիստոնէական մատենագրութեան , յառաջ և յետոյ քան զգիւտ նշանագրաց : Պատմութիւնն և ուղիղ բան հարկ ի վերայ դնեն մեզ ընդունել թէ երգք վիպասանաց յորոց դոյզն նշխարք միայն են որ հասին առ մեզ , մինչ հսկայ մարմինն (Բուգ. Գ. ԺԳ.) եղև տակաւ անհետ ընդ հեթանոսութեան (տես զԱ. տարի Ճաշակիս , էջ 114-118) , են ծնունդ հեթանոսութեան : Եթէ երգք վիպասանաց չեն ժամանակի հեթանոսութեան , ապա կամ գիւտ են այնոցիկ որ տան մեզ զհատակոտորսն , որպէս Խորենացին , Ագաթանգեղոս և Մաքիստրոս , — և այս չէր հնար , մանաւանդ Խորենացւոյն և Մաքիստրոսի , որպէս յայտնի է ի լեզուէն , — և կամ ուրումն ի քրիստոնեայ թարգմանաց , — և այս հակառակ է , եթէ ոչ լեզուին , գէթ ոգւոյն այսց վերջնոց : — Միւս եւս կէտ արժանի դիտելոյ այն է՝ զի երգիչքն թուին , նա պարտին իսկ լինել ժամանակակիցք դիպացն և անձանց զորս երգեն : Յետնագոյն ժամանակի ումեք ոչ դժուարին միայն , այլեւ անհնարին էր դիտել այնպէս մանր և հաւաստեալ զհանգամանս դիպացն և անձանց երգելոց : Զիարդ մարթ էր երգչին Տիգրանայ , եթէ չէր ժամանակակից , գիտել թէ էր նա « խարտեալ , և աղբեկ ծայրիւ հերաց , երեսօք գունեան և մեղուակն , անձնեայ և թիկնաւէտ , առոյգաբարձ և գեղեցկոտն , պարկեշտ ի կերակուրս և յըմպելիս , և ի ցանկութիւնս իսկ մարմնոյ չափաւոր » (Խոր. Ա. ԻԳ.) . թէ « Տենչայ Սաթինիկ տիկին տենչանս՝ զարտախուր խաւարտ և զտից խաւարձի ի բարձիցն Արգաւանայ . » բանք արդարեւ մթին , յայտնի է սակայն թէ զյայրատ և զպչրող բարս տիկնոջն ակնարկէ . թէ « Սմբատ ունէր հասակ անդամոց համեմատ քաջութեանն , և առաքինութեան ոգւոցն որսորդ , և գեղեցկութեան ալեօք վայելչացեալ , սակաւ ինչ արեան նիշ ունեւով յաջնս՝ որպէս գրականտիկոն ի վերայ ոսկւոյ և ի մէջ մարգարտոյ ծագեալ , և ի վերայ չոյտ անձին և մարմնոյն՝ զգոյշ յամենայնի » (Խոր. Բ. ՄԲ.) : Ժամանակակիցն լինել երգչաց յայտնի է մանաւանդ յերգս անդ վիպասանացն զԱրտաշիսէ , որ իբր չորեքհարիւր ամօք յառաջ է՝ ոչ քան զԽորենացին միայն , այլ և քան

զթարգմանիչս : Անհնար էր երգչին դնալ այնպէս միարան ընդ Տակիտոսի , եթէ չէր ժամանակակից : Երգիչն գիտէ ոչ միայն զհռչակաւոր պատերազմն Արտաշիսի (որ է Տրդատն Տակիտոսի) ընդ Հռովմայեցիս , զայրեացաւերն լինել Արտաշատու և զմիւսանգամ շինելն , « հիմնանալ , » այլ գիտէ եւս « Դոմետ ոմն եկեալ , » որով յայտ է թէ իմանայ զԴոմիտիոս Կորբուզոն զօրավար Ներոնի , և ոչ զԴոմետիանոս կայսր իբր երեսուն ամաւ յետոյ , որպէս կարծէ Խորենացին որ չէր ժամանակակից : ուստի և այլակերպէ զայն նշանաւոր պատմութիւն՝ խախտելով և՛ զկարգն և՛ զժամանակագրութիւն , փոխանակ ճշմարտին տուեալ մեզ այլ ընդ այլոյ իմն պատմութիւն : Ո՞ր իշխիցէ ասել թէ վիպասան երգոյն զՏրդատայ չէր նմա ժամանակակից , մինչեւ տալ նմա « աւերել զԹուրքս գետոց , և ցամաքեցուցանել զյորձանս ծովուց , » զայլասացութիւնն պատշաճեցուցեալ այնպէս ճշդիւ աւանդութեանն ըլ հսկայ թագաւորէն :

(Մատնացի յառաջ)

Ա. Մ. Գ.



ԳԻԻՏ ԵՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ԱՐՈՒՆՍՏԻ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Թէպէտ այսպէս սակաւք էին որ խնդրէին գիրս , և մատենք ոչ կարի ծանրագին , արուեստ գրչութեան չէր դուռնաքեոյ ինչ և առանց ըստ արժանի հատուցման : Զէ նոյնպէս ճշմարիտ կարծել թէ արուեստ և պետք դրոշմելոյ էին ի հինսն անծանօթ : Ի դրոշմել փութային նախնիքն պէսպէս օրինակաւ յորժամ և հարկ իրացն պահանջէր : Այսմիկ վկայ են դահեկանք , պատկերագիրք Հռովմայեցոց , կնիքք Բաբելացոց և աղիւսք շինուածոց նոցա , և այլ եւս արձանք և կոթողք համակ քանդակեալք նշանագրօք :

Յետ գիւտի տպագրութեան դժուարութիւնն էր մանաւանդ առ ի չգոյէ քարտիսի : Առաջին քարտէս գործեալ յԵւրոպա՝ եղև սպանիական Մաւրիտանացոցն որ ի սոյն արկանէին ի կիր զգեղեցիկ կտաւն Վաղենտիայ և Մուրկիայ : Յառաջ քան զայս վարէին բամբակեայ քարտիսիւ որ գործէր

ի Դամասկոս , և որոյ բազում ազգք ծանօթ էին վաղուց ի ձե-
նաստան : Ըստ առաւելոյ ընթեռնելաց՝ առաւելոյր ապաքէն
և գործուած քարտիսի , զի ուր յաճախեն պէտք՝ անդ յա-
ճախեն և հնարք ընդ զպէտան : Իբրեւ բազմացան յԵւրոպա
որ խնդրէինն գիրս , հնարեցաւ մամուլն , որպէս լեալ էր
հազարաւոր ամօք յառաջ ի ձենաստան : Այսպէս չիք տարա-
կոյս՝ թէ պէտք են որ առնեն զմարդիկ հնարագէտս : Բա-
զում ինչ նպաստ եղեւ տպագրութիւնն յօգուտ հասարա-
կաց , այլ ոչ նոյնպէս ի չափ մատենագրաց , նա մանաւանդ
նուազեցոյց բազմօք զերկայնակեցութիւն մատենից : Կարին
իսկ փառասէր և փառախնդիր ի մատենագրաց չկարէ այժմ
ըզձանալ իւրոց գործոց զանմահութիւն նախնեացն մատենից
մեծամեծաց , որ իբր սքանչելեօք հասին մինչեւ առ մեզ :
Շատ է այժմ մատենագրի , հռչակաւորագունին իսկ , եթէ
մատեան նորա կեցցէ ամօք ինչ աւելի քան զնա , և մեծա-
գոյն պատճառ այսորիկ է մանաւանդ ամբաւութիւն գրոց :
Արագութիւնն որով խուռն զմիմեանց կնի դան մատեանք՝
անպիտանս իմն առնէ և տայ դարձուցանել ի մուացօնս
զկարի իսկ համբաւաւորսն ի մատենից : Առաջին գործ մեր
այժմ յառնուլ մեր գիրս ինչ ի ձեռս՝ է նայել յամն յորում
ի լոյս եկեալ է մատեանն . եթէ գտանիցեմք զնա քսան կամ
սակաւ ինչ աւելի ամօք հին , ի բաց ընկենումք . հազիւ թէ
առնեմք պատիւ համբաւոյ մատենագրին իսկ , մանաւանդ
եթէ զգիտութեանց ինչ և զարուեստից ճառիցէ մատեանն :

Որպէս զամենայնէ որ երեւին ի հրապարակի՝ նոյնպէս
եղեւ և զմատենից : Ըստ յովուելոյ առգնողաց՝ յովմէին
մատեանք , և ըստ բազմանալոյ այսց վերջնոց՝ բազմանային և
առաջինքն : Դիւրագինն լինել մատենից բազմացուցանէր զըն-
թեռնելիս : Իբրեւ միանձուռնք , թողեալ զգատարկն և զանօ-
գուտ կեանս՝ դադարեցին յանցուցանելոյ զօրն ի բուն յա-
ղօթս և ի խոկմունս , և սկսան գալ զընթերցուածով գրոց
նախնեաց , բազմացուցանել զօրինակս նոցա , պճնել և պա-
ճուճել զձեռագիրսն ըստ ճարտարութեան արուեստի գրչու-
թեան . միտք նոցա սկսան բարձրանալ , և բազմացաւ թիւ
միայնակեցաց որ հմուտ էին ընթերցուածոց : Այս եղեւ մա-

նաւանդ ի ժողովրդեան , յորժամ արուեստն տալագրութեան եւս իմն աւելի սկսաւ բաղմացուցանել զգիրս : Վաղվաղակի եղեն բազումք որոց իբրեւ մին ի պիտոյլց բնութեան եղեւ ընթեռնուլ :

Փոփոխութիւն մեծ եղեւ և ի հրահանգս ուսման , կամ յօրինակի անդ ուսուցանելոյ . փոփոխութիւն՝ որ իսկ և իսկ լինէր զգալի ոչ առ եկեղեցականս միայն , այլ և առ աշխարհականս : Առ եկեղեցականս՝ զի սկսան նոքա կորուստանել զրեւմ , և առ աշխարհականս՝ զի մատեանք սկսան լինել նոցա փոխանակ բեմի : Ուր տղէտ և անուսումն է ժողովուրդն՝ անդ պիտոյ է մանաւանդ բեմն , ուստի լինին ընթերցուածք և աղօթք և երգք և քարոզութիւն : Այսպէս յերեքտասաներորդ դարու բերանացին հրահանգ տիրէր գրեթէ միահեծան . յիննեւտասներորդումն՝ երկրորդական իմն է պաշտօն բեմին : Գլխտ տալագրութեան յարոյց այսպէս ահեղ իմն ոսոխ բեմին : Արար հնարաւոր որ ինչ յառաջն անհնարին էր յՅւրոպն քրիստոնեայ , այն է՝ երես առ երես հազորդութիւն ժողովրդեան ընդ տէրութեան առանց միջնորդութեան կղերին , և եղեւ առաջին ոտն կարեւոր իմն փոփոխութեան , որ հուսկ ուրեմն յանգեաւ յԱմերիկա ի բաժանումն եկեղեցւոյ ի տէրութենէ , այն է՝ չլինել կախեալ երկնաւորին զերկրաւորէն , հոգեւորին՝ զմարմնաւորէն :

Առանց երկբայութեան է սակայն զօրութիւնն զոր վարէր երբեմն բերանացին վարդապետութիւն , կամ ուսուցանելն ի բեմէ , յունկնդիրս անգէտս և անտեղեակս ընթերցման : Յամենայն միաշաբաթիս բնակիչք իւրաքանչիւր տեղւոյ գային խմբէին զերիցաւն որում դէշին ունին անմուռնչ , առանց հարցանելոյ ինչ , ընդ կամարակալ ձեղումամբ հոյակապ եկեղեցեացն այնոցիկ որոց չինուածոցն մեծագործութիւն ցարդ յապուշ իմն կրթէ զտեսօղս , և ուր ամենայն ինչ թուի կարգեալ և յօրինեալ ի շարժել և յաժել յեռանդն զհաւատացեալն : Ասացաք ամենայն ինչ , և արդարեւ իսկ . ամբաւութիւն չինուածոցն աշտարակօքն և սլաքաւ որ թուին իմն դիմել սրանալ յերկին կոյս , որպէս և յարին սուր առ ի շեղ . որմունք պճնեալք խորշիւք զար-

դարեւովք անդրեօք սրբոց . զանգակացն մեծամեծաց գան-
գաջել . երփն երփն փայլել պատուհանացն ապակեաց յորս
երեւին ձեւք ազգի ազգիք , նիզակ և անիւ և վարդ , և
ընդ որս թափանցեալ չողն երեւի բազմագունի ըստ երան-
գոց ապակեացն . մատրուներ համակ նկարէնք պատկերօք .
կարգ կարգ սեանց նրբից , խումբ խումբ և մի զմիով . ապա
երեւել երիցուն մեծաւ չքով սկեաւն և նուիրական գինեաւ ,
մաղզմային որ ծածկէ զնա և տփով նշխարացն . ամպն ա-
նուշահոտ խնկոյն որ ելանէ ի բուրուռացն ծխելոց . կան-
թեղացն լուսաւորութիւն , որպէս և մոմեղինաց և բազմաս-
տեղն ճրագարանաց . հնչիւն զանգակացն փոքունց արծաթ-
եաց . նշոյլ լուսոյն որ ցոլանայ ի քանդակաց անօթոցն ոսկ-
ւոյ և արծաթոյ , և ի զգեստուցն փողփողելոց ի գոյն կանաչ
և ի ծիրանի ընդելուզեալ ոսկւով . ճեմք խաչիւ և դրօշիւք
չուրջ զչինուածովն ի մէջ հաւատացելոց հարեւոց ի գունձ ,
երգքն գոհութեան և օրհնութիւնք սաղմոսացն որ տան
զառհաւատչեայն երկնաւոր երգոց . ձայնք երգչացն և նուագ-
երգեհոնին որ մերթ հնչէ մեծաբարբառ ի փառատրութիւն
աստուածութեանն , և մերթ մրմնջէ մեղմով բանս խաղա-
ղութեան առ ոգիս բեկեալս . այս ամենայն , ասեմք , նպաս-
տէր յայնժամ գեղեցիկ իմն ի գործել անհզ և պատկառելի ,
իբրեւ արդարեւ պատգամ երկնաւոր , զվարդապետութիւնն
ի բեմէ : Այսպիսի էր ազդեցութիւն բեմին ի մայր եկեղեցիս
քաղաքաց . այլ ոչինչ ընդհատ անտի հզօր էր , թէպէտ այլ
օրինակ , ազդեցութիւնն յեկեղեցիս աւանաց և շինից : Շի-
նականն միամիտ և հլու էր կապեալ ընդ եկեղեցին իւրովք
առանձինն յիշատակօք խանդաղատանաց և սիրոյ : Անդ տե-
սանէր նա զաւազանն յորում մկրտեալն էր և առեալ զա-
նունն ի ծնողացն զուարճացելոց զուարթացելոց . տեսանէր
զսեղանն զորոյ առաջեաւ արարեալ էր զուխտ ամուսնու-
թեան իւրոյ , և զգրեզմանատեղին կանաչագեղ ծաղկաւէտ
որ ծածկէր հանգուցեալս , զորոց զմահն ողբացեալ էր նա ար-
տասնօք , այլ հաւատայր թէ էին կենդանիք և սպասէին
յարութեան : Բեմն որոյ տեղին է եկեղեցին , զարթուցիչ
այսպիսի յիշատակաց որ քան զայլ ամենայն յիշատակս նուի-

րական են մարդոյ , էր , ասեմք , յայնժամ դպրոց սքանչելի քան զամենայն դպրոց որ գոյին ի դարուն յայնմիկ : Զունէր այսպիսի ինչ հեթանոսութիւնն : Յոյն ճարտարախօսաց ճառք որ ի դիպաց ինչ առնուին ծնունդ՝ չկարէին գալ ի կշիռ համեմատութեան ընդ հաստատունն և անսպառ նիւթոյ քրիստոնէական քարոզութեանն ի բեմէ : Աշխարհական իշխանութիւնն իսկ յարգէր զգօրութիւն բեմին և՛ ի ժամանակաւորս և՛ ի հոգեւորս : Մեծարիչ բեմին ի թագաւորս չեղեւ դշխոյն Նզիրաբեթ միայն, որ հազար բեմից իւրոյ թագաւորութեանն միանգամայն տայր գոռալ միշտ :

(Մաստոսցի յառաջ)

Ա. Մ. Գ.

Գ Ի Տ Ն Ա Կ Ա Ն

ԹԵ ԶԻԱՐԴ ՀԱՄԵՄԱՏԻՆ ԲԱՐՈՒՔ

ՄԱՐԴԱԿԵՐՊՔ ԸՆԴ ՄԱՐԴՈՅ

Ազգք սեւամորթ Ափրիկեցւոց և Հնդիկք, որպէս դիտեցաւ յաճախ , բերեն յինքեանս մեծ իմն զօրութիւն մտաց ի տիս երիտասարդութեան , և զարգացեալ գիտութեամբ արագ արագ գնան ի կատարումն մտաւոր . այլ զկայ առնուն ի սահմանեալ ժամանակի իմիք տիոց . չմարթի նոցա յառաջագէմն ընթանալ միշտ զմի օրինակ , և բազում այն է զի , հանգոյն կապկաց ծերացելոց , յետս անդրէն դարձ արարեալ անկանին յառաջին բարս իւրեանց վայրենութեան : Զայս յանձին ունիմ և ես : Այլ պարտ է զմոռաւ ածել՝ եթէ նոյպիսի փորձք կրթութեան ելանեն ի դերեւ ի պատճառս թերակատար հնարից մանկավարժութեան . մեղկել մեղկեն դաստիարակք զբարս տղայ մանկանց բնութեան , ջանան իմն ստուարացուցանել զկար նոցա մանկական , ծանրաբեռնեն զմիտս , արգել լինին զարգանալոյ իմացութեան նոցա ըստ մարմնոցն աճել , մինչև ամբարհաւաճս առնեն զնոսս : Բայց եթէ վայրենի ոք , դժուարաւ իմն ածեալ ի կրթութիւն , անկանիցի յետոյ ուրեմն յընդաբոյս բարս իւր , և թշնամի երախտաւորաց իւրոց լեալ :

կամ աւագակ կամ տպստամբ , այլովքն հանդերձ , բռնական մահուամբ վճարիցի , ի վերջնում վայրկենի անդ կենաց հասցէ ի պայման ինչ մտաւոր որ տացէ նմա զուշով ածել ժամանակ ինչ երանաւէտ յորում վայելէրն , չեւ հասեալ նմա եղեռան , յաւուրս անդ քաղաքաւորութեան իւրոյ :

Ի Մօրեաց ոչ սակաւք որ ածան ի կրթութիւն՝ ընծայեն մեղ օրինակս ինչ . սոքա , իբրեւ դարձան առ ազգ իւրեանց որ ապստամբեալն էր յիշխանութենէն Անդղիացւոց , ուսուցանէին զվայրագասուն քաղաքակիցս իւրեանց հզօր իմն կարգաւորութեամբ կալ ընդդէմ անգղիական տէրութեանն : Ո՛չ զնոյն առնէր և Արմինեոս , պեան Գերուսքաց , յորժամ առաջնորդէր բարբարիկ ժողովրդոց ի մարտ պատերազմի՝ առ ի զերծուցանել զնոսա ի խնամակալութենէն Հռովմայ , որ էրն յայնժամ զարգացեալ ամենեւին ազնուական բարուք քաղաքաւորութեան : Ա՛ւ փորձք որ եղեն ոչ դուն ուրեք , և՛ օրինակք որ չպակասեն ի պատմութեան հնոց դարուց և նորոց ժամանակաց , յայտ յանդիման ցուցանեն զի ի վարս այնոցիկ որ ի կենաց քաղաքաւորութեան դառնան անդրէն յառաջին հանգամանա բնածին բարոյից վայրենութեան՝ երեւի հանապազ որ ինչ ի վեր է քան զչարաբարութիւն մարդակերպ կապկաց ծերացեցեց , այն է՝ յայտնաւորութիւն ինչ բանաւորութեան :

Ապա՞, որպէս ասացաք ի վեր անդ , թէպէտ չէ անհնար ազգաց վայրենեաց գալ ի կրթութիւն ինչ մտաւոր , այլ ոչ մարթի երբեք առ հասարակ ամենայն ազգաց մարդկան զարդանալ նովին չափով ի քաղաքաւորութեան և գնալ ի կատարումն մտաւոր : Աւ եթէ մարթ իցէ ածել զազգս մարդակերպ կապկաց յայս կամ յայն չափ կրթութեան , այլ վիհ մեծ լիցի միշտ ընդ մարդ և ընդ մարդակերպ , անջրպետութիւն անհնարին , որում ոչ մարթասցեն լիւր արկանել ո՛չ հնարք մարդոյ և ոչ բնութիւն իրաց իսկ գլխովին(*) :

8. Գ.



(*) Քաղ հանաք զհատածս զայս ի Ռ. Հարթմանայ մատենէն որ առանձինն զՄԱՐԴԱԿԵՐՊ ԿԱՊԿԱՅ ճառէ , գործ արդարեւ լի հմտութեամբ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի ԳՐՈՅ ՏԵԼԵՄԱՔԱՅ

Յետ այսորիկ դարձան եկին անդրէն առ Կալիփսոյ , որ դէտ աին կալեալ սպասէր նոցա : Անդ Նիմփայքն՝ զհերսն հիւսեալ և արկեալ հանդերձս սպիտակս՝ նոցա սպաս հարկանէին . նախ մատուցանէին խորտիկս որ սլարդ և անխառն էին և կարի անուշահամ և մաքուր : Ոչ էր այլ միս տեսանել անդ , այլ զմիս թռչնոց , զոր ինքեանք վարմս արկեալ ըմբռնեալ էին , կամ զմիս երէոց զոր յորս ուրեք նետիւ հարեալ սպանեալ էին : Գինի քաղցրագոյն քան զխառնելիս աստուածոց հեղոյր ի ստոմանաց արծաթեայց ի տաշտս ոսկիս զարդարեալս ծաղկամբք : Բերէին և կողովս լի պտղովք , ազգի ազգի , զորս գարունն յարդարեալ պատրաստէ և աշուն յորդագոյնս հեղեալ զեղեալ տարածէ ընդ երեսս երկրի : Ի նմին իսկ ժամու չորեքին ի մանկամարդ Նիմփայից անտի սկսան զեղգեղել երգս քաղցրաձայնս : Նախ զգուպարած դիցն երգէին ընդ սկայս , զսէրն Արամաղդայ ընդ Սեմելեայ , զծնունդն Բաղքոսի և զգաստիարակութիւնն նորա առ ծերովն Սիլենաւ և զվազսն Ատլանդեայ և Հիպպոմենի որ յաղթէր խնձորովքն ոսկովք որ բերեալ էին ի պարտիդէ Հեսպերիտաց : Յետոյ ուրեմն երգէին և զպատերազմն որ ի Տրոյադա եղեւ . իսկ արութիւնք քաջութեանց Ոգիսեայ և հանճար իմաստութեանն նորա մինչեւ յամպս բարձրացեալ դրուատեալ հռչակէին : Առաջինն ի Նիմփայից , որոյ անուն էր Լիւկոթոյէ , զգեղգեղանս քնարին խառնէր ի ձայն երգոց այլոցն համօրէն Նիմփայից : Յորժամ լսէր Տելեմաք զանուն հօր իւրոյ՝ արտասուք յաչաց նորա իջանէին թանալ զայտոս նորա և առաւելուին զգեղն չքեղ զերեսաց նորա : Կալիփսոյ ,

եւ տեղեկութեամբք ազգի ազգի գաղտնեաց բնութեան , զորս գեղեցիկ իմն ածէ ի մէջ մատենագիրն անուանի իւրով ճարտարն գրչաւ : Հարմմանս այս , գերմանացի ազգաւ , է վարդապետ ի համալսարանին Պերլնի , եւ մատենան զոր յիշեցաք՝ է նոր , այն է՝ ածեալ ի լոյս յանցիլում ամին :

իրբեւ ետես թէ ոչ կարէ Տեւեմաք ճաշակել զՀամադամս
խորտկաց առ ցաւոյն , անդէն ականարկեաց առ Նիմիւայսն :
Յայնժամ նոքա առին երգել վաղվաղակի զմարտն Յուշկասար-
կաց ընդ Լապիթայս և զէջն Որփէոսի ի դժոխս առ ի կոր-
զել հանել անտի զՆերիդիկէ :

Յետ ճաշոյն աւարտելոյ , առեալ մեկուսի զՏեւեմաք՝ խո-
սէր Իլւցակինն օրինակ զայս . Տեսանես , որդիդ մեծին Ուլիս-
եայ , որչափ փառաւորութեամբ և մեծաշուք սպասուք ըն-
կալայ զքեզ : Գիտա՞ծի՛ր զի անմահ եմ ես , և մահկանացու
ոք Հմարթի գալ ի կղզիդ յայդ իմ՝ առանց լուծանելոյ զվրէժ-
պատուհասի յանդգնութեանն . և եթէ չէր հոգի իմ հաճ-
եալ ընդ քեզ , տաքնապ նաւակոծութեանն իսկ զոր կրեցեր՝
ոչ կարէր զերծուցանել զքեզ ի սաստկութենէ բարկութեան
իմոյ : Սմին երանութեան հանդիպեալ էր և հայր քո իրբեւ
զքեզ . սակայն ոչ ինչ գիտաց շահել անտի : Ժամանակս բա-
զումս պահեցի զնա ի կղզւոյ յայսմիկ առ իս . և կալ մնալ
ընդ իս յանեղծ և յանմահ կենդանութեան՝ ի նորա կաման
էր ապաստան : Այլ անմիտ ցանկութիւնն նորա դառնալոյ
ի հայրենիս իւր , յանշուքն , յաննշանն և յողորմ , ետ նմա
զամենայն զերախտիս զայսոսիկ առ ոտն հարեալ անարգել :
Տես դու արդ որչափ բազում ինչ կորոյս նա սակս Իթակէի
զոր ոչ իսկ ժամանեաց տեսանել : Ամենեւին մերժեալ քա-
մահեալ եթող զիս միայն միայնակ և ինքն հեռացեալ մեկ-
նեցաւ աստի . այլ հողմայոյզք և մրրիկք եղեն ընդ իմ վրէժ-
խնդիրք . նաւ նորա ծփեալ տատանեալ ի բռնաշունչ հողմոց
ընկղմեալ անհետ եղեւ յանդունդս ծովու : Արդ , ջանա՛ դու
ի տխրագոյն դիպաց աստի շահս օգտութեան գտանել ան-
ճինդ : Յետ նաւաբեկութեանն չիք այլ եւս քեզ յոյս տեսա-
նելոյ զնա միւսանդամ կամ տիրելոյ կղզւոյն Իթակէի յետ
նորա : Զուարթ լեր և մի տրտմեա՞ծի՛ր վասն կորստեան նորա .
քանզի աւասիկ գտանես աստ դիւցակին մի որ կամի զքեզ
երանիկ երջանիկ առնել , և թագ արքայութեան զոր նայն
քեզ մատուցանէ :

(Մատուցի յառաջ)

Ս. Գ.

ԹՕԹԱՓՈՒՄՆ ՏԵՐԵՒՈՅ

Կապտեալ աշուն ըզմեր անտառ՝
Ծածկէր զգետին շուրջ յիւր աւար .
Խորհուրդ ինչ ոչ ունէր պուրակ ,
Լուռ անշըշունջ կայր եւ տխակ :
Տըրտում հիւծեալ ընդ այգ կենաց
Երիտասարդ որ՝ յամր ի գնաց՝
Ել անտառին յայց միւսանգամ
Զոր սիրէրն յոյժ ի մանկութեան :
« Մընա՛ բարեալ , սիրուն պուրակ ,
Հաս ինձ օրհաս . քո սուգ , ըզգամ ,
Ազդ առնէ զբախտ իմ խաւարին ,
Եւ ինձ մահու լինին գուշակ
Անձնիւր տերեւքդ որ թօթափին :
.....
Եւ մեռանիմ . շունչ ցըրտագին
Շընչեաց յիս արդ հարաւ մըթին .
Եւ , սի՛ն ըստուեր , թըռեալ ի բաց
Իմ գեղեցիկ զարուս կենաց :
Անկի՛ր , տերեւ դու միօրեայ ,

Թաքո՛ յաչաց զուղիդ դըմնեայ .
Մի՛ զվայրն ուր ես եղէց վաղի՝
Տեսցէ իմ մայր բեկեալ սըրտիւ .
Բայց յամայի թէ յանտառակ
Գայցէ խօսեալն իմ հերարծակ
Լալ զիս՝ յորժամ խոնարհի տիւ ,
Զարթո՛ , տերեւ , դոյզն աղմըկաւ
Անդ զիմ ոգին սփոփեալ սակաւ : »
Ասաց նա զայս , եւ հեռացաւ
Անտի անդարձ : Իսկ ի գետին
Անկեալ անդէն տերեւն յետին՝
Զաւուրն յետնոյ տայր ըզնըշան :
Փորեն նըմա եւ գերեզման
Անդ ընդ կաղնեաւ : Այլ սիրելին
Ոչ ել մեկնակ շիրմին ի յայց .
Հովտին երբեմն այր խաշնարած
Յուզէր եւեթ՝ յտից խօշին՝
Գերեզմանին ըզլըռութիւն :
ՄԻԼՎՈՒԱ

Յ. Գ.

ԱՂՈՒԷՍ ԵՒ ՔՕՇ

Սեպուհն աղուէս ընկերշակեալ
Ընդ նոխագի ,
Որ բարեկամ էր նորա , բարձր
Եւ ինչեքրբ ,
Բայց որ ըստ քիթն անդըր հագիւ
Թէ տեսանէր ,
Որ մեւսն ի բնէ , որպէս յայտ է ,
Չըզուբարոյ է եւ մեղմեխ :
Նըբողեալ ի ծարաւոյ իջին սորա ի
Գուր մի խոր ,
Իւրաքանչիւր հար ըզպասուք ծա .
Բաւոյն անդ :
Յետ ըմպելոյ ցըպարպատել երկու
Գուն եւս ,
Ասէ աղուէսըն ցընկեր իւր . « Զի՛նչ
արասցուք , նոխազ եղբայր .

Ըմպել արբաք , գործ է այժմիկ
Այլըծել աստի .
Բարձր դու զաքեացսըդ յառաջոյ ի
Վեր , զեղջիւրըս քո նոյնպէս .
Յեցո դո՛ւ զդոսա ընդ որմն , եւ ես
Ընդ կուռն քո ի վեր
Ելից նախ մագըլցելով .
Ապա յեղջիւրըս քո կոխեալ ,
Մեքենայիդ օգնութեամբ քաջ
Գամ մի ի դուրս թէ ելանել յաջո .
Դեցայց ,
Ապա եւ զբեզ հանից աստի : »
« Ի մօրո՛ւս իմ , » ասէ քօշն , « երդ-
նում թէ քաջ է խորհուրդդ այդ .
Քանի՛օն սիրելի է ինձ այր ըզգօն
Իրրեւ ըզբեզ .

իմ չէր երբեք, խոստովանիմ,	Չէր քո, թուի ինձ, իջեալ ի գուրդ:
լեալ այսպիսի գաղտնեաց գր-	Այլ ինձ զի՞ փոյթ, յապահովի եմ
տակ: »	աւասիկ .
եւ աղուէ՛նն ի ջըրհորոյն, թողեալ	Ջանա եւ դու ճողոպրել զանձն, եւ
զընկերն,	զամենայն փոյթ արկ ի կիր .
եւ ի յորդոր համբերութեան	կարեւոր ինչ գործ է իմ
Արկանէ՛ նրմա զայս ճառ .	Որ չտայ ինձ թոյլ ժամաւաճառ
« Եթէ այնչափ, » ասէ, « տըռուել	լինել յերկար: »
էր քեզ երկնից	Ըզվախճա՛ն պարտ է նկատել յա-
Հանճար որչափ ունիս ի ծնօտըս	մենայնի:
քո մօրուս,	ԼԱՅՈՐԹԷՆ Ա. Մ. Գ.

ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ

Հ Ա Յ Ե Ր Է Ն Լ Ե Ջ Ո Ւ Ի

Բ

ԲԱՌՆԱԼ ԶԳԼՈՒԽ . Բլիսաբէլ: * Բարձին զգլուխս նոցա :
—*(Յուդիթ) հատեալ եբարձ զգլուխ նորա (Հողեփեռնեայ):

ԲԱՐԵՄԱՐԴԻԿ ԼԻՆԵԼ . Էրեպաշտաբէլ: Երեւել յարեւել: * Որ միանգամ կամին բարեմարդիկ լինել մարմնով, նոքա ստիպեն զձեզ թլփատել:

ԲԱՐԿ ԾԻԾԱՂԵԼ . Կարի ինքեւ. Կար ինքեւ: * Յանկարծակի բարկ ծիծաղէր:

ԲԱՐԿԱՆԱԼ ՅՈՒՄԵՔԷ . Կար ինքեւ: Կար ինքեւ: * Վասն օրինացն իսկ իւրեանց . . . բարկացան նոքա ի մէնջ, ի վէգ եկին և արարին զայս ամենայն: —* Բարկացաւ ի նմանէ մինչեւ յօրն դատաստանին Տեառն մերոյ:

ԲԱՐՁԱՌՈՒ ԼԻՆԵԼ . Կար ինքեւ: Կար ինքեւ: * Ոչ միմեանց բարձառուս լինել միանգամայն . այլ ումանց աստ, և ոմանց անգ թազաւորել:

ԲԱՐՁՐՆՏԻՐ ԼԻՆԵԼ . Կար ինքեւ: Կար ինքեւ: * Վասն օրինացն իսկ իւրեանց . . . բարկացան նոքա ի մէնջ, ի վէգ եկին և արարին զայս ամենայն: —* Բարկացաւ ի նմանէ մինչեւ յօրն դատաստանին Տեառն մերոյ:

ԲԱՐՁՐ ԱՌՆԵԼ . Կար ինքեւ: Կար ինքեւ: * Վասն օրինացն իսկ իւրեանց . . . բարկացան նոքա ի մէնջ, ի վէգ եկին և արարին զայս ամենայն: —* Բարկացաւ ի նմանէ մինչեւ յօրն դատաստանին Տեառն մերոյ:

րարեր զիս : — *Բարձր առնեմ զքեզ , Տէր : — *Բարձր արասցուք զանունն նորա յաւիտեան :

ԲԱՐՁՐ ԼԻՆԵԼ . Բարձրանալ . Բարձրանալ : *Բարձր եղէց ի հեթանոսս : — Բարձր եղիցի Աստուած վերկուլթեան խնայ :

ԲԱՐՁՐԱՑՈՒՑԱՆԵԼ ԶԲԱՐՔԱՆ . Բարձրանալ . Բարձրանալ : *Առ ո՞ր բարձրացուցեր զբարբառ քո : — *Բարձրացուցէք զբարբառ ձեր ի վերայ նոցա : — *Բարձրացո իբրեւ զվոյլոյ զբարբառ քո :

ԲԱՐՁՐ Ի ԳԼՈՒԽ . Բարձր զլուս . Բարձրանալ . Բարձրանալ : *Բարձր ի գլուխ պարծի ողորմութիւն առ դատաստանաւուն :

ԲԱՑԻ Ի ԲԱՑ , Ի ԲԱՑԻ Ի ԲԱՑ . Զարհուս . Զարհուս : *Բացէ ի բաց Տէր երեւեցաւ նմա : — Բացէ ի բաց հեռանան յերեսաց նոցա : — *Բացէ ի բաց ճանաչի որ հզօր է լեզուաւ : — *Ի բացէ ի բաց ազգ առնէ տալ աւետիս :

Կամ՝ Բարձրանալ . Բարձրանալ : *Փոքա վաղվազակի զամբարիշտս , և ծածկեա յերկրի բացէ ի բաց : — *Որպէս օրէն է համբերողաց բացէ ի բաց անարգել ինչ զոր ոչ է օրէն յանձինս մատուցանել :

ԲԱՑԻՓԻԿ՝ ԲԱՑԻՓԻԿ ԽԱՂԱԼ . Զբարձր Բարձր Զբարձր . Զբարձր . Զբարձր : *Մինչեւ ամօթխածն իցէ , ստէպ խրատիցես . . . մինչեւ քողընկէց բացխփիկն խաղայցէ : — *Բացխփիկն նախորտամբն խաղայցէ :

ԲԱՑՈՒՍՏ Ի ԲԱՑ . տես զԲԱՑԻ Ի ԲԱՑ (ըստ առաջին երկուց մտաց) : *Մինչեւ տարածեալ իցեն ճառագայթք արեգականն , բացուստ ի բաց յառաջարձակ լուսովն լուսաւորէ զաշխարհս ամենայն : — *Ի տեսլենէ օձի միով բացուստ ի բաց փախչին մարդիկ :

ԲԱԽԱԿԱՆ Է . Բարձր է . Է Բարձր : *Միթէ արջառ և ոչ խար սալանանիցի՝ և բաւական լինիցի նոցա : — Տէր , աշաւասիկ են աստ երկու սուրք . և նա ասէ ցնոսա . Բաւական են : — *Նրկերիւր զահեկանի հաց չէ դոցա բաւական :

ԲԵԿԱՆԵԼ ԶՍԻՐՏ . Զարհուս . Զարհուս : *Ձայն որոտման ահեղ սաստիկ բեկանէ զսիրտս մարդկան :

ԲԵԿԱՆԵԼ ՍՐՏԻ . Զարհուս . Զարհուս : *Բեկցին ամենայն սիրտք , և ամենայն ձեռք լքցին :

ԲԵԿԱՆԻՄ ԱՆԴՐԵՆ . Զարհուս . Զարհուս : *Անդրէն յան-

ձըն բեկեկոյ ի քարանձաւաց լերանց՝ ձայնից արձագանգաց :
ԲԵՌՆ ԼԻՆԵԼ . Զանգուհիսն՝ բեռն ըլլալ յարդու : *Ընդէր
լինիցի ծառայ քոյ բեռն տեառն իմոյ արքայի : — *Ձեզ բեռն
ինչ ոչ եղէց :

ԲԵՐ ԱՍԱՑԻՑ . Երեսնէ համար . որդես լի : *Որպէս , բեր
ասացից , սյգի ոմն տնկէ :

ԸՍՏ ԲԵՐԱՆ . Երդ քլաւի . ասին յիշու : *Տայր Յովսէփ
ռոճիկս հօրն և եղբարց իւրոց , և ամենայն տան հօր իւրոյ ,
ցորեան ըստ բերան :

Ի ԲԵՐԱՆՈՅ . Երկնայ . (Եկու) բերին : *Գրեաց Բարուք
ի բերանոյ Նրեմիայի : — *Գրեցեր ի բերանոյ իմոյ : — *Ուստի՞
գրեցեր , յոյր բերանոյ :

ԿԱՄ՝ ԲԵՐՆԱՅ . Բերնէ բերան : *Աւանդեն զուսումնն միմ-
եանց ի բերանոյ :

ԲԱՆՍ Ի ԲԵՐԱՆ ԴՆԵԼ ՈՒՐՈՒՔ . Եկու բերանը խօս քնել .
որան ասալ : *Մառայ քո Յովար՝ նա պատուիրեաց ինձ , և նա
եղ ի բերան աղախնոյ քոյ զամենայն բանս զայստսիկ :

ԸՆԴ ԲԵՐԱՆ ԱԾԵԼ . Եղիցէ . իմն շար խօսիլ : *Սաղմուքն
զոր յամենայն ժամ ընդ բերան ածեն : — *Ի ինչ զոր ցերեկ
ընդ բերան ածիցէ մարդն , ի նոյն և ի դադարել մարմնոյն
և ի քունն զբաղնուն միտքն :

ԳԱԼ ԸՆԴ ԲԵՐԱՆ . Եղիցէ . շար խօսիլ : *Բանք սաղ-
մոսին ձայնիւք միշտ ընդ բերանսն գայցեն :

ՀԱՐՑԱՆԵԼ Ի ԲԵՐԱՆՈՅ . Բերանը քնորել . Երդ հասնաւ
ուրէլ . քնորել : *Կայցէ կոյսն առ մեզ իբրեւ աւուրս տասն , և
ասպ երթիցէ : Եւ նա (ծառայն Աբրահամու) ասէ ցնոսա .
Մի՛ խափանէք զիս . . . արձակեցէք զիս զի երթայց առ
տէրն իմ . և ասեն եղբարք նորա (աղջկանն .) Կոչեսցուք
զաղջիկն , և հարցցուք ի բերանոյ նորա :

Ի ԲԵՐԱՆՍ ԼԻՆԵԼ . Կապանիլ : *Իբեւ հերձուածողացն
գուպարք ի բերանս եղեալ կարկեցան :

Յ . Գ .

ԻՆԱՄԱԿԱԼՔ ՀԱՆԴԻՍԻՍ

Յ . ԳՈՒՐԳԵՆ Ա . Մ . ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

Ա. Գին միամեայ բաժանորդութեան Հանդիսիս՝ 25 դահեկան ոսկւոյ , հատուցանելի կանխաւ .

Բ. Ծախք թղթատարի ի գաւառս և յերկիր օտար՝ դահեկան արծաթոյ 6 ի տարւոյ .

Գ. Զգին բաժանորդութեան , զթուղթ և զամենայն գիր առաքել սլարտ է , յանուն խնամակալաց Հանդիսիս , առ Տ. Յովսէփի Գաւլաթեան , գրավաճառ ի Կ. Պոլիս , ի Զաքարիայի .

Դ. Զմէն մի օրինակ Հանդիսիս մարթ է ստանալ 3 դահեկանաց առ ամենայն գրավաճառս Կ. Պոլսոյ :



ՎՐԻՊԱԿՔ

(յ Ա . Թ ո ՚ ի ն)

Էջ	Տող	Վրիպակ	Ուղիղ
11	16	գողովառն	գողախառն .
14	21	որ ազդե առնես զայ- գուն գալուստ	զորոյ գալուստն ազդ առնէ այդ .
14	22	Որո՞վ կարգաւ	Ո՞ր հրամանաւ :



Վ. Ա. Ճ. Ա. Ռ. Ի

Ե Ր Ի Ց Դ Ա Հ Ե Կ Ա Ն Ա Ց

معارف نظارت جلیله سنک ۹۱۰ نومرولی رخصتنامه سیمیه طبع اولنمشد
